Կ. Ա. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ՌՍԴԲՊ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԱՁՈՒԼՈՒՄԸ

«Իսկրա»-ի հրատարակությունից հետո Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական խմբակները միավորվում են որպես լենինյան-իսկրայական ուղղության կազմակերպություններ, ձևավորվում են կուսակցական կոմիտեներ։ 1902 թ. ամռանը Ստ. Շահումյանի անմիջական ղեկավարությամբ Թիֆլիսում ստեղծվում է Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը։ Նույն թվականի հոկտեմբերին հրատարակվում է Միության անլեգալ տպագիր օրգան «Պրոլետարիատ» թերթը՝ լենինյան «Իսկրա»-ի հետևորդը, նրա գաղափարների պրոպագանդիստը հայ իրականության մեջ։ Երևան գալով պրոլետարական ինտերնացիոնալիզմի նշանաբանով, Հայ սոցիալ-դեմոկրատների միությունն իր գործունեությունը ծավալել է Թիֆլիսի, Բաքվի և Բաթումիի կուսակցական կոմիտեների հետ սերտորեն համագործակցելով, անձնվիրաբար պայքարել է հանուն համակուսակցական խնդիրների կենսագործման։ Նա առաջին իսկ օրից իրեն հայտարարեց ՌՍԴԲՊ ճյուղերից մեկը և պատրաստակամություն հայտնեց նրա հետ միասին կռվելու հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես, և հայկականի—մասնավորապես։ Հայ սոցիալ-դեմոկրատների միության երևան գալը լուրջ գաղափարա-քաղաքական իրադարձություն էր այն բազմազգ երկրամասի համար, ուր բուրժուա-նացիոնալիստական կուսակցություններն իրենց կազմալուծիչ գործունեությամբ ձգտում էին կասեցնել Անդրկովկասի պրոլետարիատի և բոլոր աշխատավորների ինտերնացիոնալ համախմբվածությունը և ազատագրական պայքարը։

Չնայած իր կարճատև գոյությանը, Հայ սոցիալ-դեմոկրատների միությունն իր անջնջելի տեղն ունի մեր կուսակցության տարեգրության մեջ։ Պատահական չէ, որ Վ. Ի. Լենինը բարձր գնահատական է տվել նրան։ Ստանալով «Պրոլետարիատ» թերթը, Լենինն անմիջապես հետաքրքրվում է նրա բովանդակությամբ, «Հետաքրքիր բաներ» է նկատում, ապա որոշում «Իսկրա»-ում հոդված զետեղել Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստի մասին։ Շուտով աչքի ընկնող «Հետաքրքիր բաները» վեր են ածվում նշանավոր խոշոր հոդվածի, որն ուներ համակուսակցական նշանակություն։ Թերթի առաջնորդողի, ինչպես և մյուս նյութերի մասին «Իսկրա»-ի խմբագրությունը միասնական կարծիքի էր։ Լենինն ամբողջ ոգով ողջունում է Հայ սոցիալ-դեմոկրատների միության երևան գալը որպես ՌՍԴԲՊ նոր անդամի և դրվատում նրա կիսամյա պրակտիկ գործունեությունը, մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածք տալու նրա ուշագրավ փորձը։ Վ. Ի. Լենինը միաժամանակ սկզբունքային քննադատության է ենթարկում Միության անհետևողական լինելը ֆեդերալիզմի պահանջի առաջադրման կապակցությամբ և բարեկամական խորհուրդ է տալիս ծրագրից հանել այն որպես ոչ տեղին պահանջ։ Հոդվածի վերջում Լենինը կրկին անգամ ջերմորեն ողջունում է իսկրայական ուղղության

նորաստեղծ կազմակերպությանը։ Ուղղելով Միության կողմից թույլ տված սխալը, Լենինը սովորեցնում էր՝ ճիշտ ըմբռնել ազգային հարցի մարքսիստական տեսակետը։ Նա աճեցնում էր հայ մարքսիստական ազգային կադրեր։ Հայ սոցիալ-դեմոկրատների միությունն լենինյան ելույթն ընդունեց որպես միակ ճիշտը։ Հետագա տարիներում ֆեդերալիզմի պահանջը նրա կողմից չի առաջադրվել։

Հեղափոխական շարժումների հետագա վերելքը և մարքսիստական նոր տիպի կուսակցություն ստեղծելու շահերը պահանջում էին երկրամասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններից միավորվել մեկ ընդհանուր միության մեջ, միասնական՝ մարզային ղեկավար մարմին ստեղծել։ Ահա թե ինչու «Բրձոլա» և «Պրոլետարիատ» թերթերի խմբագրություններին կից ստեղծվեց բյուրո, որը և հիմնադիր համագումար հրավիրեց։ Այս երկու թերթերը ամբողջ երկրամասի կուսակցական կազմակերպությունների օրգանների դեր էին կատարում։

Համագումարը կայացավ 1903 թ. մարտին Թիֆլիսում[1]։ Ընդդեմ 15 պատգամավորներից մեկի՝ Ն. Ժորդանիայի, համագումարը հռչակեց Կովկասյան միության ստեղծումը և հայտարարեց այն ՌՍԴԲՊ մասնիկ։ Համագումարը կազմակերպական հիմք ընդունեց կուսակցական կազմակերպությունների միասնական կառուցվածքի լենինյան սկզբունքը, մերժեց Ն. Ժորդանիայի նացիոնալիստական-օպորտունիստական ծրագիրը։ Համագումարն իր համերաշխությունն արտահայտեց «Իսկրա»-ի հետ և այն ճանաչեց որպես համակուսակցական օրգան, հավանություն տվեց նրա մշակած ծրագրի և կանոնադրության նախագծերին։

Այս որոշումները կարևորագույն նշանակություն ունեին Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի ինտերնացիոնալ համախմբման համար և նշանավորեցին կուսակցական կազմակերպությունների գործունեության նոր էտապի սկիզբը։

Սակայն ծրագրային մի քանի հարցերում համագումարը հետևողական չեղավ՝ իր ժամանակավոր ծրագրում պրոլետարիատի դիկտատուրայի մասին համապատասխան կետ չմտցրեց, ազգի ինքնորոշման իրավունքը փոխարինեց ֆեդերալիզմի վրա հիմնված դեմոկրատական հանրապետության պահանջով։ Այսպիսով, սկզբունքային որոշ հարցերում ակնառու էր կովկասյան իսկրայականների ոչ բավարար թեորեական հասունությունը։

Համագումարը հավանություն տվեց կուսակցության հերթական համագումարի հրավիրման կազմկոմիտեի կանոնադրությանը և ՌՍԴԲՊ երկրորդ համագումարի պատգամավորներ ընտրեց Բ. Կնունյանցին, Դ. Թոփուրիձեին և Ա. Զուրաբյանին, պատվիրելով նրանց հաստատակամորեն պաշտպանել Լենինի և լենինյան «Իսկրա»-ի ծրագրային, կազմակերպական և տակտիկական գիծը։

Համագումարը քննարկեց տպագիր օրգանի հարցը և որոշում ընդունեց Հայ սոցիալ-դեմոկրատների միության օրգան «Պրոլետարիատ»-ը և վրացական «Բրձոլա»-ն միավորել և հրատարակել որպես Կովկասյան միութենական կոմիտեի օրգան երեք լեզվով՝ ռուսերեն՝ «Բորբա պրոլետարիատա», վրացե-

---

1 «Իսկրա»-ի № 50-ում սխալ է ասված, որ ՌՍԴԲՊ Կովկասյան միությունը ստեղծվել է 1903 թ. ապրիլին։

րեն՝ «Պրոլետարիատիս բրձոլա» և հայերեն՝ «Պրոլետարիատի կռիվ» անուններով։ Որոշման մեջ նշվեց, որ միասնական օրգանը Միության այլ հրատարակությունների հետ միասին պետք է լուսաբանի և տարածի «մեր ծրագիրը և կռիվը»։

Համագումարն ընտրեց ՌՍԴԲՊ Կովկասյան միության կոմիտե, որի կազմում տարբեր ժամանակներ ընտրվել են Մ. Ցխակայան, Բ. Կնունյանցը, Ա. Սուլուկիձեն, Ստ. Շահումյանը, Ի. Ստալինը, Մ. Բոչորիձեն, Ա. Զուրաբյանը, Ալ. Բեկզադյանը, Մ. Դավիթաշվիլին, Ա. Խումարյանը, Ա. Ջափարիձեն, Դ. Պոստոլովսկին, Ս. Խանոյանը, Վ. Բոբրովսկին, Ֆ. Մախարաձեն, Ն. Ալաջալովան և ուրիշներ։

Կովկասյան միության ստեղծումը լենինյան-իսկրայական ուղղության փայլուն հաղթանակն էր երկրամասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում։ Կովկասյան միության առաջին համագումարը շրջադարձային կետ հանդիսացավ Անդրկովկասի իսկրայականների գործունեության մեջ և մեծապես նպաստեց երկրամասի կուսակցական կազմակերպությունների գաղափարական և կազմակերպական ամրապնդման գործին։ Կովկասյան միության կոմիտեն պրոլետարական ինտերնացիոնալիզմի փայլուն հաղթանակն էր բազմազգ երկրամասի պայմաններում։ Հենց այս ժամանակվանից սկսած Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները աճել, ամրապնդվել և առաջ են շարժվել սկզբունքային պայքար ծավալելով նացիոնալիզմի դեմ։

Կովկասյան միութենական կոմիտեին մշտական օգնություն էր ցույց տալիս Վլադիմիր Իլյիչ Լենինը, մեծ հոգատարություն էր ցուցաբերում նրա կազմակերպական ամրապնդման, հրատարակչական աշխատանքը ընդլայնելու, հեղափոխական շարժումները կազմակերպելու և գլխավորելու ուղղությամբ։ Նրա աջակցությամբ ժնևում կազմակերպվեց հայերեն և վրացերեն լեզուներով հեղափոխական գրականության հրատարակչություն։

Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը հանդիսացել է Կովկասյան միության ստեղծման նախաձեռնողներից ու հիմնադիրներից մեկը։ Հիմնադիր համագումարի որոշման մեջ ասված է. «...Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, նաև «Պրոլետարիատ»-ի և «Բրձոլա»-ի խմբագրությունները հարկ համարեցին միանալ և ընդհանուր Միություն կազմել։ Վերոհիշյալ կազմակերպությունների ներկայացուցիչները ընդհանուր ժողով գումարելով, վճռեցին կազմել Կովկասյան միություն, որը ներկայանալու է իբրև Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մի ճյուղը... Միությունը կունենա իր օրգանը հայերեն և վրացերեն՝ «Պրոլետարիատի կռիվը»։ Այսպիսով, Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը ներկայացված է որպես «Պրոլետարիատ»-ի խմբագրություն։ Պետք է ափսոսալ, որ ՍՄԿՊ պատմության բազմահատորյակի առաջին հատորում շրջանցվում է ՀՍԴՄ դերը կուսակցության Կովկասյան միության ստեղծման գործում։ Կովկասյան միութենական կոմիտեի կազմում տարբեր ժամանակներ ընտրվել են ՀՍԴՄ-ի նախկին հինգ անդամներ։ Այն հանգամանքը, որ Կնունյանցն ու Զուրաբյանը համագումարի պատգամավորներ էին պաշտոնապես Բաքվի ու Բաթումի կոմիտեների կողմից, ընդգծում է ՀՍԴՄ երկու ականավոր անդամների խոշոր դերը սոցիալ-դեմոկրատիայի զարգացման մեջ Կովկասում և նրա պրոլետարական ինտերնացիոնալիստական բնույթը։

Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը նպատակ չէր հետապնդում հարատևել որպես կուսակցական առանձին կազմակերպություն։ Այդ երևում է թեկուզև այն բանից, որ նա իր տպագիր օրգանի առաջին համարում զետեղած գլխավոր փաստաթղթում՝ Մանիֆեստում միաձուլման գաղափարն է տվել, որը և տեղի ունեցավ երկրամասի սոցիալ-դեմոկրատական կուսակցական կազմակերպությունների առաջին համագումարում։ ՀՍԴՄ-ի նպատակն էր հայերեն լեզվով մարքսիզմի լայն պրոպագանդայի հիմք դնել, կազմակերպել բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների մերկացումը, նպաստել ՌՍԴԲՊ տեղական միասնական կազմակերպության ստեղծմանը Անդրկովկասում։ Հիմնականում կատարելով իր այս պատմական միսիան, ՀՍԴՄ պետք է միաձուլվեր Կովկասյան միության մեջ։ Եվ նա միաձուլվեց։ Սա օրինաչափ էր և հասկանալի։ Միաձուլումը խոշոր ակտ էր, որ տվյալ դեպքում կարող էր կատարել համագումարը։ «Պրոլետարիատ» և «Բրձոլա» թերթերի միավորումը մեկ ընդհանուր օրգանում նշանակում էր ՀՍԴՄ միաձուլում Կովկասյան միության մեջ։

Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը Կովկասյան միության մեջ միաձուլվելու մասին միակ գրավոր աղբյուրը համագումարի որոշումն է երկու թերթերի միավորման վերաբերյալ։ Գրավոր այլ աղբյուրների բացակայությունը մեր պատմաբաններին կարծես հիմք է տվել բանավեճ մղելու այն մասին, թե երբ և ում հետ է միաձուլվել ՀՍԴՄ։ Առաջացել են տարակարծիքներ։ Տարածված կարծիք է, որ ՀՍԴՄ 1902 թ. աշնանը ձուլվել է Թիֆլիսի կոմիտեի մեջ։

Այս տեսակետը, ինչպես և այն, ըստ որի Հայ սոցիալ-դեմոկրատների միությունն իբր ստեղծվել է հիշյալ կոմիտեի նախաձեռնությամբ և իբր գոյություն է ունեցել նրան կից, ցավոք, որոշակի տեղ է գտել ՀԿՊ և ՎԿՊ պատմության ուրվագծերում[2]։ Հեղինակները հենվում են «Իսկրա»-ում տպագրված մի թղթակցության վրա, որտեղ շոշափվում է այդ հարցը։ Այդ թղթակցությունում, որը կրում է «Գործադուլները Թիֆլիսում» վերնագիրը, ասված է, որ 1902 թ. սեպտեմբերին թվով 150 վրացի և հայ բանվորներ դադարեցրին աշխատանքը, ներկայացնելով վարպետներին մի շարք պահանջներ։ Գործադուլը շարունակվեց երեք շաբաթ։ Ի վերջո տերերը զիջեցին։ Թղթակցությունը վերջանում է հետևյալ խոսքերով. «Դերձակների գործադուլը ղեկավարում էին պարտիայի կոմիտեն և կոմիտեի մեջ ավելի ուշ մտած հայկական սոցիալ-դեմոկրատների խումբը»[3]։ Խոսքը Թիֆլիսի կոմիտեի և ՀՍԴՄ Թիֆլիսի խմբի մասին է։ Մեզ թվում է, որ այս թղթակցության վրա հենվող հեղինակները շփոթում են «միությունը» «խմբի» հետ և «մտնելը» «միաձուլման» հետ։ Տվյալ թղթակցությունը հիմք չի տալիս պնդելու, որ ՀՍԴՄ ձուլվել է Թիֆլիսի կոմիտեի մեջ։ Այստեղ խոսքը Թիֆլիսի խմբի մասին է։ Դեռ ավելին, Ա. Խումարյանը գրել է, որ ոչ թե խումբն է մտել կոմիտեի մեջ, այլ խմբի ներկայացուցիչ Ա. Զուրաբյանը։ Նախապատվությունը պետք է Ա. Խումարյանին տալ և ոչ թե թղթակցության հեղինակին։

Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը գործում էր Կովկասում և, բնականաբար, կարող էր ձուլվել միայն Կովկասյան միության մեջ։ Այն կատարեց երկրամասի սոցիալ-դեմոկրատական կուսակցական կազմակերպությունների

2 Տե՛ս «ՀԿՊ պատմության ուրվագծեր», Ե., 1958, էջ 74, Ե., 1963, էջ 38։ «Очерки истории КП Грузии», ч. I, 1957, стр. 77.

3 «Искра», № 32, 1903, 15 հունվարի (ընդգծումը մերն է — Կ. Մ.)։

հիմնադիր համագումարը։ Այստեղից բխում է պատասխան և միաձուլման ժամանակին վերաբերվող հարցին՝ 1903 թ. մարտի երկրորդ կեսում։ Ակներև է, որ եթե Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը ձուլված լիներ 1902 թ. աշնանը, «Պրոլետարիատ» թերթը գոյություն չէր ունենա մինչև 1903 թ. մարտը կամ թե չէր կատարի այն դերը, որ նա կատարեց հիմնադիր համագումար հրավիրելու պատմական գործում։ Վերջապես, և սա ամենակարևորն է, Վ. Ի. Լենինին, անկասկած, հայտնի կլիներ ամեն ինչ, և պատմությունը չէր հարստանա այն փաստաթղթերով, որոնք մեզ հայտնի են որպես լենինյան ժառանգություն Հայ սոցիալ-դեմոկրատների միության մասին։ Մտքից հեռու բան է կարծել, թե Լենինը կողջուներ մի կազմակերպություն, որը հինգ ամիս առաջ դադարել էր գոյություն ունենալուց, ձուլվելով մի ուրիշ կազմակերպության մեջ։

Ազգային կուսակցությունների ներկայացուցիչները, առանձնապես «սպեցիֆիկները», ատելությամբ էին խոսում Հայ սոցիալ-դեմոկրատների միության մասին, խեղաթյուրում էին «Պրոլետարիատ»-ի ճիշտ դրույթները, չարամտորեն զրպարտում էին նրա ղեկավարներին, կեղծում էին ՀՍԴՄ պատմությունը։ Ազգայնական կուսակցությունների թշնամական վերաբերմունքը ՀՍԴՄ նկատմամբ բխում էր վերջինիս հետևողական լենինյան ուղղությունից։ ՌՍԴԲՊ երկրորդ համագումարում Լիբերը կատաղի պայքար էր մղում կուսակցության լենինյան կազմակերպական սկզբունքի դեմ, դժգոհում էր, թե ինչու Ա. Զուրաբյանը մեղադրում է Բունդին կազմակերպական նացիոնալիզմի մեջ, դիմում էր համեմատությունների, բերում էր Կովկասի օրինակը[4]։ Բունդի այս տակտիկական քայլին դիմեց Լեհաստանի և Լիտվայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, իր օրգանում տպագրելով «Կովկասի սոցիալիստական շարժումներից» վերնագրով հոդվածը[5]։ Ի դեպ նշենք, որ կուսակցության կազմակերպական հարցերում Բունդի և «սպեցիֆիկների» տեսակետները լրիվ համընկնում էին։ Նրանք համերաշխ էին պրոլետարական ինտերնացիոնալիստական սկզբունքի, մարքսիստական կուսակցության կազմակերպական կառուցվածքի, ինչպես նաև նրա ծրագրային նպատակների և տակտիկական հայացքների դեմ մղվող պայքարում։ Պատասխանելով Լիբերին, Ա. Զուրաբյանը հետևյալ հայտարարությունն արավ. «Ի միջի այլոց պետք է ասեմ, որ Հայ սոցիալ-դեմոկրատների միություն գոյություն չի ունեցել և գոյություն չունի։ Դա եղել է միայն ցուցանակ»[6]։ Եթե բառացիորեն հասկանանք այս հայտարարությունը, կստացվի, անշուշտ, որ խիստ է ասված, անգամ շատ խիստ, բայց այն բառացիորեն չպիտի հասկանալ։ Այս հայտարարությունը իր իմաստով նկատի ունի Հայ սոցիալ-դեմոկրատների միության ինտերնացիոնալիստական բնույթը, որը ոչ մի կերպ նման չէ Բունդի սեպարատիստական կամ նացիոնալիստական բնույթին։ Այստեղ Ա. Զուրաբյանը քննադատում է Բունդի կազմակերպական հայացքները և պահանջները։ Նրա հայտարարությունը պետք է հասկանալ այն իմաստով, որ Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը երևան չի եկել և գոյություն էլ չունի որպես բունդանման կազմակերպություն։ Ա. Զուրաբյանն իր այս հայտարարությամբ ձգտել է ետ մղել Բունդի և նրա կոմնա-

---

4 Второй съезд РСДРП. Протоколы, М., 1959, стр. 79.

5 Այս հոդվածի դեմ հանդես եկավ Բ. Կնունյանցը, «Իսկրա»-ի № 50-ում։

6 Второй съезд РСДРП. Протоколы, М., 1959, стр. 79.

կիցների հարձակումները, պաշտպանել մարքսիստական կուսակցության կառուցման ինտերնացիոնալիստական սկզբունքները, ցրել լիբերների թյուր պատկերացումները Հայ սոցիալ-դեմոկրատների միության և Կովկասյան միության մասին։

Մնվելով որպես լենինյան-իսկրայական կազմակերպություն և ձուլվելով Կովկասյան միության մեջ, Հայ սոցիալ-դեմոկրատների միությունն իր այդ պատմական ակտով մարմնավորել է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի իդեալը՝ նրա հետևողական ինտերնացիոնալիզմը։ Այն, որ Վ. Ի. Լենինը բազմիցս մատնանշել է կովկասյան պրակտիկան որպես ինտերնացիոնալիզմի փայլուն օրինակ, որը պետք է ընդօրինակեն ՌՍԴԲՊ մյուս կազմակերպությունները[7], ամբողջովին վերաբերում է նաև Հայ սոցիալ-դեմոկրատների միությանը։

К. А. МАМИКОНЯН

ФОРМИРОВАНИЕ КАВКАЗСКОГО СОЮЗА РСДРП И СЛИЯНИЕ СОЮЗА АРМЯНСКИХ СОЦИАЛ-ДЕМОКРАТОВ

Резюме

Союз армянских социал-демократов оформился летом 1902 г. (как одна из местных организаций РСДРП) и развернул свою деятельность совместно с кавказскими комитетами РСДРП. В. И. Ленин дал его деятельности высокую оценку. Несмотря на кратковременность существования Союза, он навсегда вошел в героическую летопись нашей партии.

На I съезде социал-демократических организаций Закавказья происходило объединение двух газет — «Пролетариата» и «Брдзолы» — в один общий орган Кавказского Союзного комитета «Борьба пролетариата», выходящий на русском, армянском и грузинском языках. Это решение знаменовало собою объединение Союза армянских социал-демократов в Кавказский Союз.

Отсутствие других письменных источников, кроме решения об объединении двух газет, служило основанием историкам для спора о том, когда и с кем объединился Союз армянских социал-демократов? Появились разногласия. Наиболее распространенным является мнение о том, что объединение Союз слился с Тифлисским комитетом осенью 1902 г. В статье доказывается несостоятельность этой точки зрения. Это объединение было осуществлено учредительным съездом социал-демократических организаций Закавказья, состоявшемся в марте 1903 г. Немыслимо предположить, что Союз армянских социал-демократов образовался осенью 1902 г., а его печатный орган функционировал до второй половины марта следующего года. Наконец, и это исключительно важно, В. И. Ленин приветствовал существующую организацию, а не органи-

7 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 19, էջ 37, հ. 20, էջ 655, հ. 35, էջ 79։

зацию, прекратившую свое существование за 5—6 месяцев до этого. Родившись как организация ленинско-искровского направления и объединившись в Кавказский Союз РСДРП, Союз армянских социал-демократов воплотил в жизнь идеал революционной социал-демократии— последовательный интернационализм.